ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ

01 սեպտեմբեր 2022թ.

«Երևանի ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

«Հայագիտական»

մեթոդմիավորման աշխատանքային տարեկան պլան

2022-2023 ուսումնական տարի

Մ/Մ նախագահ՝ Մերրի Սեփոյան

Մեթոդմիավորումը դպրոցում

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.

-դասախոսություն,

- սեմինար,

-գործնական սեմինար,

- ստեղծագործական բանավեճ,
- հյուրասրահ,
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,
- գործնական խաղեր,
- իրավիճակային ուսուցում,
- դերային խաղեր,
- մեթոդական մրցույթներ,
- մեթոդական գաղափարների տոնավաճառ,
- մեթոդական վարպետության դասեր,
- բանավեճեր,
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր, - հանդիպում «կլոր սեղանների» շուրջ:

Կարող են կազմակերպվել նաև գործնական աշխատանքներ, բաց դասեր, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումներ, առարկայական շաբաթներ, «Տարվա ուսուցիչ» մրցույթներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոններ և այլ մեթոդական միջոցառումներ:

Աշխատանքի ընթացքում կարող են անցկացվել առարկայական մեթոդմիավորումների միավորված նիստեր: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքների շրջանակում հետաքրքրություն են ներկայացնում նաև ուսուցիչներին տրվող տնային աշխատանքները:

Դրանք կարող են լինել՝

- դասի մոդելավորում (հատվածաբար կամ ամբողջական),
- տրված թեմայով դասերի մշակումներ,
- որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում,
- ըստ որոշակի թեմայի, պրոբլեմի գրականության ընտրություն,
- ստուգիչ նյութերի, թեստերի կազմում,
- հուշագրերի, դիդակտիկ նյութերի կազմում, պատրաստում,
- առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում,

-այցելություններ դասերի, արտադասարանական միջոցառումների՝ վերլուծություններով,

- տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում,
- աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ,

- որոշակի պրոբլեմի շուրջ զեկուցման նախապատրաստում,
- ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում,
- սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում,
- որոշակի թեմայով կամ միասնական մեթոդական թեմայով ստեղծագործական հաշվետվություն:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում: Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից:

Ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման աշխատանքը դպրոցում:

Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատարելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը:

Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ:

Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը:

Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական «գանձարկղում»:

Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը:

Մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման ընթացքում երաշխավորվում է ներառել հետևյալ հարցերը.

- Առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր, հարցեր մանկավարժությունից և հոգեբանությունից (մասնագետների ելույթներ):
- Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:
- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:
- Նոր դասագրքերի ուսումնասիրում:
- Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում:
- Միջառարկայական կապերի հարցեր:
- Տետրերի ստուգման հարցեր:
- Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:
- Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր:
- Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում:
- Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում:
- Քննական նյութի նախապատրաստում:
- Սեմինարներ, խորհրդակցություններ:
- Առարկայական գիտագործնական համաժողովներ:
- Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ:
- Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասապլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ և այլն:
- Առարկայական արտադասարանական աշխատանքներ:

Աշխատանքի ոլորտը	Աշխատանքի բովանդակությունը	Պատ. անձ
	ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ	
1. Ուսումնամեթոդական աշխատանքներ	1.Մասնախմբի կազմի ձևավորում։ 2. Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման առաջարկների մշակում։ 3. Ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի նախնական բաշխում, առաջարկների ներկայացում դպրոցի տնօրենին։ 4.Մասնախմբի աշխատանքային պլանի քննարկում, ներկայացում հաստատման։ 5. Թեմատիկ պլանների կազմում և ներկայացում հաստատման։ 6. Բանավոր, գործնական և թեմատիկ աշխատանքների քանակի որոշում։ 7. Մեթոդական օգնություն մասնախմբի ուսուցիչներին։ 8.Սովորողների առաջադիմության միավորային և ուսուցանող գնահատման քննարկում։ ա. միավորային գնահատման սանդղակ բ. ուսուցանող գնահատման արդյունավետություն գ. հայտորոշիչ գրավոր աշխատանքները՝ որպես ուսուցանող գնահատման միջոց։ 9.ԿԱՊԿ ունեցող աշակերտների թվաքանակի ճշտում։ ԱՈԻՊ-ների մշակման գործընթաց։ 10. Սովորողներին դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ. ուսուցիչներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1.Էլեկտրոնային մատյանների գրանցման վերաբերյալ իրազեկում։ 2. Մ/մ ուսուցիչների ուսումնադաստիարակչական աշխատանքային ծրագրերի կազմում և ստուգում։ 3. Հերթական ատեստավորում անցած ուսուցիչների ուսումնական գործունեության անհատական վերահսկողություն՝ ըստ ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ.
3. Համադպրոցական միջոցառումներ	1. Ողջո՛ւյն, դպրոց 2 .Սեպտեմբերի 21	մ/մ անդամներ

4. Համագործակցում ծնողների հետ	1. Հանդիպումներ ծնողների հետ։ 2. Էլեկտրոնային մատյանների հետ կապված հարցեր։	

	Հոկտեմբեր	
1. Ուսումնամեթոդական աշխատանքներ	1. Քննարկում. «Ինչպես օգտվել մեթոդների բազայից, համացանցային պաշարների շտեմարաններից» 2. Ուսուցչի աշխատանքային գործունեության և մասնագիտական որակի վերաբերյալ կարծիք։ 3.Մեթոդամանկավարժական զեկուցումներ։ 4.Բաց դասեր վերապատրաստված ուսուցիչների մոտ։ 5. «Պատմություն» առարկայի դրվածքի ուսումնասիրություն։	մ/մ նախագահ ուսուցիչներ փոխտնօրեն
2. Համադպրոցական միջոցառումներ	1. Ուսուցչի տոնին նվիրված միջոցառումներ։ 2. «Էրեբունի-Երևան». միջոցառում՝ նվիրված Երևանի տոնին 3. Ավ. Իսահակյան. միջոցառում 4. Թեմատիկ էքսկուրսիա Եղ. Չարենցի տուն-թանգարան։	մ/մ անդամներ
	Նոյեմբեր	
1.Ուսումնամեթոդական աշխատանքներ	1.ՏՀՏ կիրառումը հիմնական դպրոցում։ 2.ԱՈԻՊ- ների գործածության վերանայում։ 3. Համադպրոցական գրավոր աշխատանքներ 5-9րդ դասարաններում՝ Մայրենի, Հայոց լեզու առարկաներից։ 4. Վահագն Դավթյան-100. միջոցառում 5. Թեմատիկ էքսկուրսիա Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ. ուսուցիչներ
	Դեկտեմբեր	

1. Ուսումնամեթոդական աշխատանքներ	1. Դեկտեմբերի 13 «Մեղու 2022» առցանց մրցույթի կազմակերպում։ 2.Ուսուցիչների տարակարգի բնութագրիչների և դրա շնորհման չափանիշների հետ ծանոթացում։ 3. Ծրագրերի կատարողականի ընթացքի քննարկումներ։ 4.Ուսուցիչների զեկույց-հաշվետվություններ աշակերտների կարողունակությունների և հմտությունների ձևավորման նպատակով տարվող աշխատանքների մասին։ 5.Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարման ընթացքի քննարկում։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ. ուսուցիչներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1. Առարկայական օլիմպիադաներ։	մ/մ
3. Համադպրոցական միջոցառումներ	Ամանորյա միջոցառումներ	ուսուցիչներ

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ» ՄԱՍՆԱԽՄԲԻ 2022 – 2023 ՈՒՍՏԱՐՎԱ II ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Աշխատանքի ոլորտը	Աշխատանքի բովանդակությունը	Պատ. անձ
	ՀՈՒՆՎԱՐ	
1. Ուսումնամեթոդական աշխատանքներ	1. II կիսամյակում սովորողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների պլանավորում: 2. «Ուսումնական նախագծերի իրականացման ձևերը միջին դպրոցում». քննարկում խորհրդակցություն: 3. Թեմատիկ պլանավորումներում փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության:	փոխտնօրեն մ/մ նախագ. մասնախմբի անդամներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1. Աշակերտների հաճախումների ուշացումների վերահսկողություն: 2. Մասնախմբի ուսուցիչների ուսումնադաստիարակչական աշխատանքային ծրագրերի վարման ստուգում: 3. Դասագրքերի վիճակի ստուգում:	փոխտնօրեններ գրադարանավ.
3. Համադպրոցական միջոցառումներ	1. Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառում: 2. Ձեկույց՝ նվիրված Հայաստանի ազգային հերոսներին	զինղեկ մ/մ անդամներ
4. Համագործակցում ծնողների հետ	1. Ծնողական ժողովներ. I կիսամյակի ուսումնական արդյունքների ամփոփում և առաջադիմության քննարկում:	

	ՓԵՏՐՎԱՐ	
1. Ուսումնամեթոդական աշխատ.	1.«Հայոց լեզու», «Մայրենի», «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրություն: 2. Անհատական դասալսումներ վերապատրաստված ուսուցիչների մոտ՝ ըստ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի: 3. Ընթերցման օլիմպիադա 6-րդ դասարանցիների միջև:	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ.
2. Համադպրոցական միջոցառումներ	1.Թումանյանական օրեր: 2.Մայրենիի օրվան նվիրված զրույցներ, դասեր:	

	ՄԱՐՏ	
1. Ուսումնամեթոդական աշխատ.	1. Կրտսեր և միջին դպրոցների միջև համագործակցային աշխատանք. • փոխադարձ դասալսումներ՝ անհատական, խմբային 2. Մեթոդական զեկուցում։	փոխտնօրեն մ/մ նախագահ մ/մ անդամներ միջին դպրոցի ուսուցիչներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1.Դրվածքի ուսումնասիրման արդյունքների քննարկում ամփոփում։ 2. Համադպրոցական գրավորներ։ • արդյունքների վերլուծություն քննարկում 3. Փոխադարձ դասալսումներ, հաշվետվություն, արդյունավետության քննարկում;	տնօրեն փոխտնօրեն մ/մ ուսուցիչներ
3. Համադպրոցական միջոցառումներ	1. Մարտի 8։ 2. Եղ. Չարենց. հիշատակի միջոցառում։	

	ԱՊՐԻԼ	
1. Ուսումնամեթոդական աշխատ.	1. Քննարկում՝ «Տնային աշխատանքը, դրա տրման ձևերը։ Տնային աշխատանքը՝ որպես ուսուցանող գնահատման ձև» թեմայով; 2. Ֆիզկուլտուրայի դրվածքի ուսումնասիրություն։	մ/մ նախագ.
2. Ներդպրոցական վերահսկողություն	1. Տեխնոլոգիայի դրվածքի ուսումնասիրություն։ 2.Թեմատիկ աշխատանքների վերանայում։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագ.

3. Համադպրոցական միջոցառումներ	1. Հիշատակի դասեր /զրույցներ/ դասարաններում Մեծ Եղեռնի տարելիցի հետ կապված։ 2. Վիկտորինա 5-րդ դասարանների մեջ։ 3. Համո Սահյան. հիշատակի միջոցառում։	մ/մ անդամներ
4. Համագործակցում ծնողների հետ	1. Ծնողական ժողովներ՝ II կիսամյակի ընթացիկ առաջադիմության քննարկման նպատակով 2. Հանդիպումներ ուսման մեջ ետ մնացող աշակերտների ծնողների հետ:	մ/մ անդամներ

	ՄԱՅԻՍ	
1. Ուսումնամեթոդական աշխատ.	1.Համադպրոցական գրավոր աշխատանքներ քննական 9-րդ դասարաններում քննական առարկաներից։ 2. Նախապատրաստական աշխատանքներ 9-րդ դասարաններում քննություններից առաջ. փորձնական բանավոր քննություններ։	Տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագահ, անդամներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1. 120 և ավելի ժամ բացակայությունների հաշվառում, առկայության դեպքում քննությունների և ստուգողական աշխատանքների կազմակերպում 2. Ոչ քննական դասարանների երկրորդ կիսամյակի և տարեկան ուսումնական առաջադիմության արդյունքների հաշվետվություն։ 3. Տարեկան ուսումնական արդյունքների հաշվետվություն։	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագահ

3. Համադպրոցական միջոցառումներ	1. «Վերջին դաս»։ 2. «Մայիսը՝ հաղթանակների ամիս». միջոցառումներ» ։	մ/մ անդամներ

	ՀՈՒՆԻՍ	
1. Ուսումնամեթոդական աշխատ.	1. Քննասենյակների նախապատրաստում, խորհրդատվությունների կազմակերպում՝ ըստ կարգացուցակի։ 2. Գալիք ուսումնական տարվա նախնական դասաբաշխում։ 3. Գալիք ուստարվա աշխատանքային ռեժիմի և աշխ. շաբաթվա տևողության քննարկում։ 4. Սովորողների ամառային առաջադրանքների նախապատրաստում։	փոխտնօրեն, մ/մ նախագահ մ/մ անդամներ
2. Ներդպրոցական վերահսկողություն	1. 2022-2023 ուստարվա հայագիտական մասնախմբի կատարած աշխատանքների հաշվետվություն։ 2. 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Պատմություն», «Հայոց լեզու», «Ֆիզկուլտուրա» առարկաներից քննությունների՝ • արդյունքների քննարկում • հաշվետվություն	տնօրեն փոխտնօրեն մ/մ նախագահ
4.Աշխատանք ծնողների հետ	1. Ծանոթացում 9-րդ դասարանների քննություններ կարգին։ 2. 9-րդ դասարաններում ծնողական ժողովների անցկացում	

	ՕԳՈՍՏՈՍ	

1. Ուսումնամեթոդական աշխատ.	1. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախագծի քննարկում, առաջարկներ: 2. Համադպրոցական ուսպլանի պետական և դպրոցական բաղադրիչի բաշխում: 3. Դպրոցի մանկավարժական խորհրդի անդամների ընտրություններ 4. Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, թեմատիկ պլանների, մեթոդական ձեռնարկների քննարկում: 5. Մասնախմբի ուսուցիչների աշխատանքային ծրագրերի հաստատում, առարկայական թեմատիկ պլանների կազմում, մեթոդական ուղեցույցներով ապահովում: 6. Մասնախմբի 2023-24 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:	տնօրեն փոխտնօրեն, մ/մ անդամներ մ/մ նախագահ գրադարանավար